



Հայաստանում մեկնարկել է ատոմային ոլորտի հոբեյանին նվիրված՝ «Տեխնոլոգիաներ, որոնք փոխում են աշխարհը» խորագրով մրցույթը

Հայաստանում սկսվել է ատոմային ոլորտի 75-ամյակին նվիրված՝ «Տեխնոլոգիաներ, որոնք փոխում են աշխարհը» խորագրով նկարչական մրցույթի համար աշխատանքների ընդունումը: Կազմակերպիչներն են «Ռոսատոմ» պետկորպորացիան ու Հայկական ԱԷԿ-ը՝ համագործակցությամբ ԿԳՄՍ և ՏԿԵ նախարարությունների, ինչպես նաև Երևանում ու Գյումրիում գիտության ու մշակույթի Ռուսաստանյան կենտրոնները:

*«Այս տարի ատոմային ճյուղը նշում է իր 75-ամյա հոբեյանը, միևնույն ժամանակ գտնվելով ակտիվ զարգացման փուլում: Սա ծայրաստիճան բարձրտեխնոլոգիական ճյուղ է, որը ձգտում է մշտական և արագ աճի: Միջուկային տեխնոլոգիաները դարձել են գեներացման հուսալի աղբյուրներ, նպաստում են գիտական հետազոտությունների և նոր հայտնագործությունների՝ բազմաթիվ ոլորտներում. արդյունաբերություն, բժշկություն, գյուղատնտեսություն, տիեզերքի նվաճում: Պրոֆեսիոնալների փորձի ու երիտասարդ սերնդի նախաձեռնողականության համադրումը կօգնի ոչ միայն ատոմային արդյունաբերության, այլև ամբողջ երկրի զարգացմանը»,-*ասաց **«Ռոսատոմ Արևելյան Եվրոպա» ԲԲԸ-ի տնօրենի տեղակալ Վլադիմիր Գորնը:**

Մրցույթի մասնակիցները պետք է կարողանան ի ցույց դնել ատոմային տեխնոլոգիաների ապագայի վերաբերյալ իրենց երևակայությունն ու տեսլականը: Հավանաբար ոմանք ունեն Հայկական ԱԷԿ-ում աշխատող բարեկամներ կամ մտերիմներ, կամ ոմանց մոտ արդեն իսկ ձևավորվել են մարդկանց կյանքում խաղաղ ատոմի կիրառման մասին սեփական պատկերացումները:

*««Տեխնոլոգիաներ, որոնք փոխում են աշխարհը» մրցույթը կօգնի երիտասարդ սերնդի շրջանում խելամիտ վերաբերմունք ձևավորել ատոմային տեխնոլոգիաների նկատմամբ: Հայաստանի համար դա առավել արդիական է, քանի որ ամբողջ երկրի էլեկտրաէներգիայի մեկ երրորդն արտադրվում է ատոմակայանում, և հենց դա հիմք հանդիսանում մեր տնտեսության զարգացման համար: Խիստ անհրաժեշտ է, որ մեր երեխաներն ու երիտասարդությունը գիտակցեն ատոմային էներգետիկայի և միջուկային տեխնոլոգիաների կարևորությունը Հայաստանի համար ու տեսնեն իրենց համար այդ ոլորտներում կրթության ու մասնագիտական զարգացման հնարավորություններ: Մենք վստահ ենք, որ գիտության ու տեխնոլոգիաների ժամանակակից ու մատչելի ձևով հանրայնացումը Հայաստանի գիտական ներուժի հաջող զարգացման գրավականն է»,-*նշեց **ՀՀ ԿԳՄՍ նախարարության արտաքին կապերի վարչության պետ Արկադի Պապոյանը:**

Մրցութային աշխատանքը կարելի է կատարել գեղարվեստական ցանկացած նյութով կամ թվային տեխնոլոգիաների կիրառմամբ: Մրցույթի ժյուրին կզնահատի գաղափարի յուրօրինակությունը, կատարման վարպետությունը, երևակայությունը, ինչպես նաև՝ թեմայի ամբողջական ներկայացումը: Մրցույթին մասնակցելու համար հրավիրվում են Հայաստանի բոլոր երեխաներն ու երիտասարդները, մասնակցել կարող են 6-ից 31 տարեկան անձինք:

*«Հարգելի մասնակիցներ, Ձեր աշխատանքներում հնարավորինս ազատություն տվեք երևակայությանն ու պատկերացումներին: Այդ դեպքում Ձեր երազանքները իրականություն կդառնան: Հիշեք՝ խաղաղ ատոմը ապագայի անցաթուղթն է: Իսկ մարդկության ապագան դա ամբողջ տիեզերքն է»,-*մրցույթի մասնակիցներին ստեղծագործական երևակայություն ցուցաբերելու կոչ արեց

Ժյուրիի անդամներից Հայաստանի վաստակավոր նկարիչ, հայկական 50 հազար դրամանոցի, հուշամեդալների և շքանշանների էսքիզների հեղինակ Ռուբեն Արուստյանը:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել նշված հասցեով՝ <https://cutt.ly/ufsaOKI>

Նկարները պետք է ուղարկել Երևանում ՌԳՄԿ, Հայաստան, ք. Երևան, 0019, Պռոշյան փ. 1-ին նրբ, տ. 20/14. Գրաֆիկական աշխատանքներն ուղարկել e-mail: armenia_erevan@rs.gov.ru հասցեին:

Մրցույթի աշխատանքների ընդունման վերջնաժամկետն է 2020 թվականի սեպտեմբերի 30-ը: Արդյունքները կամփոփվեն հոկտեմբերին: Մրցույթի հաղթողներին կտրվեն դիպլոմներ ու նվեր-հավաստագրեր:

Մրցույթի անցկացման կանոնների մասին առավել մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ «Ռոսատոմ» պետկորպորացիայի Lookaround Armenia կրթական ծրագրի ֆեյսբուքյան էջից՝ <https://www.facebook.com/events/1945348172261840/>.

«Ռոսատոմի» մասին

«Ռոսատոմ» -ը աշխարհում միակ ընկերությունն է, որն ունի պաշարներ և իրավասություններ միջուկային էներգիայի արտադրության ցանցի բոլոր հատվածներում հաջող գործունեության համար: «Ռոսատոմը» միավորում է ակտիվները լայն տեսականիով. Ներառյալ՝ նախագծում, շինարարություն, ատոմակայանների շահագործում, ուրանի արդյունահանում, վերամշակում ու հարստացում, միջուկային վառելիքի մատակարարում, ծախսված վառելիքի պահպանում, փոխադրում և անվտանգ վերամշակում: Ռոսատոմի-ի գործունեության շրջանակը ներառում է նաև միջուկային բժշկության կարիքների համար սարքավորումների և իզոտոպային ապրանքների արտադրություն, գիտական հետազոտությունների անցկացում, կյուրազիտություն, թվային արտադրանքի արտադրություն և տարբեր միջուկային և ոչ միջուկային նորարարական ապրանքների արտադրություն: Պետական կորպորացիայի ռազմավարությունն է՝ մշակել ցածր ածխածնի արտադրության նախագծերի զարգացում, ներառյալ հողմաէներգետիկան: Այսօր «Ռոսատոմը» միավորում է ավելի քան 300 ձեռնարկություն և կազմակերպություն, ընդհանուր առմամբ դրանցում աշխատում է շուրջ 250 հազար մարդ:

Հայկական ԱԷԿ-ը՝ Հարավային Կովկասի միակ ատոմային կայանն է, որն արտադրում է Հայաստանի էլեկտրաէներգիայի ավելի քան 30 տոկոսը: Ատոմային էներգետիկայի բնագավառում Հայաստանի և Ռուսաստանի առանցքային նախագիծն է՝ Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի արդիականացումն ու շահագործման ժամկետի երկարաձգումը: Հայաստանը կուտակել է ԱԷԿ-ի շահագործման եզակի փորձ: Երկրորդ էներգաբլոկը վերագործարկվել է շուրջ 6.5 տարվա դադարից հետո: Կայանը կարևորագույն դեր է խաղում Հայաստանի էներգահամակարգի զարգացման և երկրի սոցիալ-տնտեսական կյանքի համար: Հայկական ԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարաձգման նախագծի գլխավոր կապալառուն է «Ռուսատոմ Սերվիս» ընկերությունը:

Ռուսաստանի միջուկային բնագավառի 75-ամյակը

2020 թ-ին լրանում է Ռուսաստանի միջուկային արդյունաբերության 75 տարին: Ռուսաստանը եղել և մնում է ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման առաջատարը: 1954 թ-ին ռուս գիտնականները գործարկել են առաջին ատոմակայանը, իսկ այսօր Ռուսաստանն արդեն ունի վերջին սերնդի 3+ երեք կայան: Դարի երեք քառորդի ընթացքում, Ռուսաստանի միջուկային արդյունաբերության շնորհիվ, միջուկային էներգաբլոկները հայտնվել են շատ երկրներում, և այսօր Ռուսաստանն իր արտաքին պորտֆելով առաջատարն է:

Աշխարհում միակ միջուկային սառցահատային նավատորմը, արագ նեյտրոններով աշխատող ամենահզոր ռեակտորը, ներդրումը թվայնացման մեջ, միջուկային բժշկություն. և այս ամենը Ռուսաստանն է: